# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 073

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.04.2021ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 055 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ և ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.408 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, «ՁԻԷՅՁԵՄ-ԱՐՄԵՆԻԱ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 73-րդ հոդվածի, 47-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և կարևորելով Արենի համայնքի Արենի բնակավայրում մանկապարտեզ (մշակութային կենտրոն) ունենալու հանգամանքը, ինչպես նաև, հաշվի առնելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը և «ՁԻԷՅՁԵՄ-ԱՐՄԵՆԻԱ» զարգացման հիմնադրամի կողմից երեխաների կրթությանը աջակցելու նպատակով մանկապարտեզ (մշակութային կենտրոն) կառուցելու պատրաստակամությունը, Արենի համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,408 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0041-0019, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, հասցեն՝ Արենի համայնք, գ. Արենի, 16 փողոց, թիվ 5) մանկապարտեզ (մշակութային կենտրոն) կառուցելու նպատակով 99 (իննսունինը) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «ՁԻԷՅՁԵՄ-ԱՐՄԵՆԻԱ» զարգացման հիմնադրամին:
2. Արենի համայնքի ղեկավարին՝ «ՁԻԷՅՁԵՄ-ԱՐՄԵՆԻԱ» զարգացման հիմնադրամի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի անհատույց օգտագործման պայմանագիրը, մանկապարտեզի (մշակութային կենտրոնի) կառուցման ավարտից հետո «ՁԻԷՅՁԵՄ-ԱՐՄԵՆԻԱ» զարգացման հիմնադրամի հետ փոխհամաձայնեցված կարգով մանկապարտեզը (մշակութային կենտրոնը) ընդունել շահագործման և Արենի համայնքի միջոցների հաշվին իրականացնել ամբողջական սպասարկումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ _____

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ _____

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ _____

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ _____

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ _____

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ _____

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**